

ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանի ողջույնի խոսքը
Պոլիտեխնիկական համալսարանի 85-ամյակին նվիրված գիտաժողովին
(2018 թ. նոյեմբերի 26-30, Երևան)

Գիտաժողովի հարգելի մասնակիցներ, հյուրեր...

Ուրախ եմ ձեզ ողջունել Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի տարեկան գիտաժողովի բացման կապակցությամբ:

Օգտվելով առիթից՝ նախ թույլ տվեք շնորհավորել Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի հիմնադրման 85-ամյակի կապակցությամբ:

Համալսարանն իր անցած ուղով ուրույն տեղ ունի Հայաստանի արդի բուհական համակարգում: Բազմաբնույթ կրթական և հետազոտական ծրագրերի իրականացումը, պրոֆեսորադասախոսական կազմի արհեստավարժությունը, միջազգայնացման գործընթացի ընդլայնվող միտումներն իրենց անմիջական ազդեցությունն ունեն երկրի գիտական և կրթական համակարգի ձևավորման գործում:

Այսօր Հայաստանում խիստ կարևորվում են տեխնիկական գիտությունների ոլորտում իրականացվող աշխատանքները և ոլորտի զարգացմանն ուղղված միջոցառումները: Գիտական կազմակերպություններով և միջազգային ճանաչում ունեցող մասնագետներով հարուստ այս բնագավառը հանդիսանում է Հայաստանի գիտության զարգացող ճյուղերից մեկը:

Տարեցտարի բարելավվում են մեր գիտնականների աշխատանքի արդյունավետության ցուցանիշները, ավելանում է բարձր վարկանիշ ունեցող ամսագրերում տպագրված հոդվածների քանակը և որակը: Եվ, այս առումով, Պոլիտեխնիկի դերը և կատարած աշխատանքները, ակնհայտորեն, էական են: Պոլիտեխնիկական համալսարանը գրեթե մշտապես ակտիվորեն մասնակցում է կոմիտեի կողմից կազմակերպվող մրցույթներին և ծրագրերին՝ ինչպես հիմնարար, այնպես էլ՝ կիրառական գիտության բնագավառում: Համալսարանի գիտաշխատողները ներգրավված են պետական բյուջեից ֆինանսավորվող գիտական և գիտատեխնիկական թեմաներում և ծրագրերում, համալսարանում հաճախ են կազմակերպվում գիտական միջոցառումներ: Երիտասարդ գիտնականները մասնակցում և կազմակերպում են ամառային դպրոցներ, ակտիվ օգտվում են երիտասարդների աջակցությանն ուղղված

դրամաշնորհներից: Բավականին զարգացած են համալսարանի կապերը միջազգային գիտական համագործակցության բնագավառում: Պոլիտեխնիկն ինտեգրված է միջազգային գիտական համակարգի մեջ և սերտորեն համագործակցում է մի շարք արտասահմանյան գիտական կենտրոնների և համալսարանների հետ:

Այժմ թույլ տվեք հայտարարել, որ բարձր գնահատելով գիտության և տեխնիկայի բնագավառում արդիական խնդիրների հետազոտություններում ձեռքբերումներն ու ակնառու նվաճումները, ինչպես նաև գիտական կադրերի պատրաստման գործում ունեցած մեծ ավանդը՝ Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի 85-ամյակի կապակցությամբ համալսարանի տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների ու էլեկտրոնիկայի ինստիտուտի «Կառավարման համակարգեր» ամբիոնի վարիչ, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Օլեգ Նիկոլայի Գասպարյանին Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության կոմիտեի նախագահի 2018 թվականի նոյեմբերի 23-ի N 51-Ա/Ք հրամանով շնորհվել է գիտության կոմիտեի Ոսկե մեդալ:

Գիտության կոմիտեի անունից շնորհավորում եմ պարոն Օլեգ Գասպարյանին և մաղթում նորանոր հաջողություններ:

Հարգելի գործընկերներ,

Ավարտելով խոսքս՝ կցանկանայի Գիտության կոմիտեի և անձամբ իմ անունից համալսարանի ղեկավարությանը և ողջ անձնակազմին մաղթել գիտական անսպառ եռանդ, գործին սեր ու նվիրում:

Հաջողություններ և նորանոր ձեռքբերումներ ձեզ գիտակրթական և գիտության ոլորտի զարգացման գործում:

ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտեի նախագահ
Սամվել Հարությունյան